ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

- Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ
- Օրը՝ 06.12.2018թ.
- Ժամը՝ 12:00

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Մ. Թումանյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի առաջին տեղ զբաղեցնող բոլոր մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Հադրութ -1» ՍՊԸ-ի և «Ստանդարտ 2014» ՍՊԸ-ի:

-«Հադրութ -1» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը,

-«Ստանդարտ 2014» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, /1-ին տեղ զբաղեցրած յուրաքանչյուր չափաբաժնի մասով/:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց,

- մերժել «Հադրութ -1» ՍՊԸ-ի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի,

- ծանուցել «Ստանդարտ 2014» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում առկա անհամապատասխանությունը, ուղղելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	*Մ. Թումանյան*	
Հանձնաժողովի անդամներ՝	*Լ.Հարությունյան*	
	Ա.Բաղդասարովա	
	Բ.Վարդանյան	
	Ն.Եղոյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	*Ա. Համբարձումյան*	